



«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ

Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ
Առարկան՝ Հասարակագիտություն
Հետազոտող ուսուցիչ՝ Մարինե Խաչատրյան
Ուսումնական հաստատություն՝ Ա. Երզնկյանի անվան հ.118 ավագ
դպրոց

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
«ԸՆՏԱՆԻՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.....	4
ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ 6	6
ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՎՐԱ	9
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	Error! Bookmark not defined.
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Ընտանիքի հոգեբանությունը ուսումնասիրման կարևոր թեմա է, քանի որ ընտանիքում առկա մի շարք խնդիրների պատճառով հասարակության մեջ տեղի են ունենում արատավոր երևույթներ: Թեման արդիական է, երեխաները բռնության են ենթարկվում իրենց ընտանիքներում թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես, որը պայմանավորված է ծնողների ցածր կրթական մակարդակով և ընտանիքում եղած խնդիրներով: Առաջանում են կոնֆլիկտներ, որի պատճառները բազմազան են և անհրաժեշտ է լուծումներ գտնել կոնֆլիկտները հաղթահարելու համար: Կոնֆլիկտները չլուծելը կարող է բացասական հետևանքներ ունենալ ընտանիքի անդամների և հատկապես երեխաների վրա: Երեխաները կարող են իրենց անտեսված զգալ, որը կարող է առաջացնել սթրես, վախ, լարվածություն, ինքնագնահատականի անկում:

Հետազոտության նպատակն է բացահայտել ընտանիքում առկա խնդիրները և առաջարկել լուծման ուղիներ:

Հետազոտության նպատակից բխող խնդիրները հետևյալն են՝

- Ուսումնասիրել ներընտանեկան հարաբերությունները
- Կարևորել ծնողների դերը, երեխաներին հասկանալու, նրանց մոտ առաջացած անհամաձայնությունները հաղթահարելու գործում
- Հաշվի առնել երեխաների առանձնահատկությունները, նպաստել նրանց ինքնուրույնության և ինքնադրսևորման գործընթացին
- Ուսումնասիրել առաջացած կոնֆլիկտների պատճառները և ուղիներ փնտրել այն հաղթահարելու համար

Հետազոտության օբյեկտը՝ ընտանիքի անդամները և երեխաները:

Հետազոտության առարկան՝ ընտանիքի անդամների և երեխաների հոգեկան կյանքը, ակտիվության հոգեկան ձևերը, առանձնահատկությունները և օրինաչափությունները:

«ԸՆՏԱՆԻՔ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ընտանիքը անձանց խումբ է, որոնք միավորված են ամուսնության, արյան կամ որդեգրման կապերով և շփվում են միմյանց հետ իրենց համապատասխան սոցիալական դերերով՝ ամուսիններ, ծնողներ, երեխաներ: Ընտանիքը, որը բաղկացած է ամուսնական զույգից և նրանց երեխաներից հայտնի է, որպես միջուկային ընտանիքի տեսակ: Ընտանիքի տեսակը, որը կազմված է ամուսիններից և նրանց երեխաներից, ամուսինների ծնողներից և այլ հարազատներից կոչվում է ընդլայնված ընտանիք: Ընտանիքը տարբեր արժեքավոր գործառույթներ է իրականացնում: Կատարում է վերարտադրողական գործառույթ՝ ընտանիքում ծնվում են երեխաներ: Ընտանիքի անդամների շփվում են միմյանց հետ, հաղորդակցման շնորհիվ առաջանում է սիրո և ջերմության մթնոլորտ ընտանիքում: Ընտանիքը կատարում է տնտեսական գործառույթ՝ ապահովելով ընտանիքի նյութական բարեկեցությունը: Ընտանիքի կարևոր գործառույթներից է նաև երեխաների դաստիարակությունն ու սոցիալականացումը:

Պատմականորեն, մշակույթների մեծ մասում ընտանիքը եղել է նահապետական կամ արական սեռի գերիշխող: Ընտանիքի այս տեսակը ներառում է նույն հարկի տակ ապրող մի քանի սերունդ: Ժամանակակից ընտանիքը տարբերվում է նախորդից: Օրինակ՝ նահապետական ընտանիքը սկսեց տեղիք տալ սեռերի միջև ավելի մեծ հավասարության: Փոխվեցին ընտանեկան դերերը, որոնք ժամանակին համարվել են բացառապես արական կամ իգական: Երեխաներին խնամելը, ընտանեկան փոխհարաբերությունները դառնում են ընդհանուր գործունեություն (Barnard 2023):

Սոցիալական դերերի մի ամբողջ խումբ առանձնացվում է ըստ կենսաբանական ծագման: Դրանցից են տղամարդու, կնոջ, հոր, մոր, որդու, դստեր, պապի, տատի և այլ ազգակցական դերերը: Ընդհանրապես ազգակցական, արյունակցական կապի մեջ գտնվող մարդիկ առաջին հերթին փոխներգործում են հենց ըստ իրենց կենսաբանական դերերի, որոնք նրանց տրվում են անկախ իրենց կամքից: Կարևոր է, թե նրանք ինչպես են կատարում իրենց դերերը (Նալչաջյան 2004: 147):

Ընտանիքի տեսակներ ըստ կառուցվածքի և չափի հիման վրա

- **Միջուկային ընտանիք**– այն փոքր խումբ է, որը բաղկացած է ամուսնուց, կնոջից և երեխաներից:
- **Համատեղ ընտանիք**– Այն բաղկացած է երեք կամ ավելի սերունդներից, որոնք ապրում են միասին նույն հարկի տակ, կիսում են նույն տնտեսությունը: Այն տուն է, որը բաղկացած է երեք կամ ավելի միջուկային ընտանիքներից, որոնք ապրում են միասին (Sujan 2021):

Որքան ավելի է երեխան ընդունված իր ծնողների կողմից, այնքան ավելի բարձր է նրա ինքնագնահատականը: Այս ենթադրությունը ստուգվել է ուղղակի հետազոտությունների օգնությամբ: Տվյալները ստացվում են հետևյալ եղանակներով, ա) ուսուցիչները գնահատում էին աշակերտների ինքնագնահատականը (ինքնահարգանքը), բ) կատարվում էր երեխաների ինտենսիվ կլինիկական հետազոտություն և գնահատում, գ) երեխային դիտում էին մի շարք իրադրություններում, որոնք, ինչպես ենթադրվում էր, կապված են ինքնահարգանքի հետ, դ) խոր հարցազրույցներ էին տարվում երեխաների մայրերի հետ: Հիմնականում ուշադրություն էին դարձնում երկու գործոնների վրա. ա) երեխաների հաջողությունների և հմտությունների պատմությունը, բ) ծնողի կողմից ընդունված լինելը: Պարզվեց, որ բարձր ինքնագնահատական ունեցող երեխաների ծնողները հստակ սահմաններ են գծել երեխաների վարքի համար և հսկում են, որպեսզի դրանք չխախտվեն, բայց այդ սահմանների ներսում երեխաներին լայն ազատություններ են տվել: Երեխաները կարող են սեփական կարծիք ունենալ, մասնակցել ընտանեկան խնդիրների քննարկմանը, ինքնուրույն գնահատականներ տալ երևույթներին: Այդպիսի երեխաների ծնողները նույնպես արժանապատվության (ինքնահարգանքի) բարձր աստիճան են ունենում և հարգում են իրենց երեխաների անձը: Այսպիսով՝ բարձր ինքնագնահատական ունենալու համար երեխան պետք է ընդունված ու սիրված լինի ծնողների կողմից և պետք է հաջողություններ ունենա, հմուտ լինի որոշ գործերում: Ծնողները կարևոր դեր են կատարում երեխաների համար: Նրանք ձգտում են դրական ազդեցություն ունենալ երեխաների վրա: Հսկողության տակ են պահում ինֆորմացիայի այն հոսքը, որ երեխան

ստանում է մանկության և դեռահասության տարիներին: Այս ամենը որոշակի ուղղություն է տալիս երեխաների ինքնագիտակցության զարգացմանը (Նալչաջյան 2004: 202,203):

ԸՆՏԱՆԻՔԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընտանիքի հոգեբանությունը հոգեբանության բազմաթիվ ճյուղերից մեկն է, որը ուսումնասիրում է ընտանեկան կյանքի փոխհարաբերությունները: Ընտանիքը կարևորվում է որպես սոցիալական միավոր և ուսումնասիրությունը լրջորեն սկսվել է 20 - րդ դարում: Սկզբնական շրջանում հիմնական ուշադրությունը սևեռված էր ընտանիքի առանձին անդամների, մասնավորապես՝ երեխաների վրա: 20-րդ դարի կեսերին հոգեբանները սկսեցին ընտանիքը դիտարկել որպես ինքնուրույն համակարգ՝ փոխազդեցության և հաղորդակցման իր սեփական եղանակներով, որը հնարավորություն տվեց բացահայտելու, թե ինչպես են հոգեբանները դիտարկում ընտանիքները:

Ընտանիքի հոգեբանությունն այժմ ներառում է մի շարք տեսություններ և հետազոտական մեթոդներ՝ կլինիկական հոգեբանությունից, զարգացման հոգեբանությունից, սոցիալական հոգեբանությունից և այլ ոլորտներից: Հետազոտողները ուսումնասիրում են, թե ինչպես են գործում ընտանիքները, ինչպես է դա ազդում անհատական հոգեկան առողջության վրա և ինչպես են ընտանեկան համակարգերը հարմարվում սթրեսին և փոփոխություններին: Բացի այդ, ընթացիկ հետազոտությունները կենտրոնանում են որոշակի ընտանեկան հարաբերությունների վրա, ինչպիսիք են քույր-եղբայր փոխհարաբերությունները, ծնող-երեխա փոխհարաբերությունները և գույգերի փոխհարաբերությունները: Այն ուսումնասիրում է, թե ինչպես են տարբեր հասարակական և մշակութային երևույթները ազդում ընտանիքների և հոգեկան առողջության վրա:

Ընտանիքը բաց համակարգ է և այն անընդհատ ենթարկվում է շրջապատի փոփոխվող ազդեցություններին: Ընտանիքի ներքին ներդաշնակությունը ապահովելու համար պետք է ապահովել երեք կարևոր գործընթացներ՝

- Ասիմիլացիայի, որը ապահովում է ընտանիքի ներքին կայունությունը:
- Ակոմոդացիայի, ապահովում է նորի մուտքը ընտանիք առանց հնին վնասելու:

- Աղապտացիայի, ապահովում է աղապտացիայի գործընթացը:

Ընտանիքում կարող է լինել ճգնաժամային վիճակ, երբ ամուսինների հետաքրքրությունները և պահանջմունքները վերածվում են կոնֆլիկտի: Նրանք անհանդուրժողական, աններողամիտ, նույնիսկ թշնամական վերաբերմունք են ցուցաբերում միմյանց նկատմամբ: Նման ընտանիքը համարվում է ճգնաժամային, որոնք քայքայվում են:

Առողջ ընտանիքներում հարաբերությունները սերտ են ու անմիջական, ընտանիքի անդամները մշտական կապի մեջ են, հաճախակի են շփվում, լավ գիտեն միմյանց, ներընտանեկան հարաբերությունները հավասարակշռված են և ներդաշնակ: Ընտանիքը այն առաջին միջավայրն է, որտեղ աճում, զարգանում և դաստիարակվում է երեխան: Ընտանիքի դաստիարակչական գործառույթը շատ կարևոր է, հատկապես դեռահասության շրջանում, քանի որ այդ շրջանում է տեղի ունենում երեխայի՝ չափահաս մարդու վերափոխման բուն գործընթացը, որը կապված է հոգեկանի լուրջ վերակառուցման հետ: Ընտանիքի անդամների միջև անընդհատ փոփոխվող հուզական – հոգեբանական հարաբերությունները հսկայական ազդեցություն է ունենում դեռահասի անձնավորության ձևավորման վրա: Այս առումով հատկանշական է անբարենպաստ ընտանիքների առկայությունը, որտեղ երեխայի սոցիալականացումը, զարգացման փուլերն անկանխատեսելի են: Անբարենպաստ ընտանիքներում երեխան մեծանում է՝ վստահ չլինելով, որ կարող է ստանալ ծնողների օգնությունը, աջակցությունը, երբ կզգա դրանց անհրաժեշտությունը: Երեխաների մոտ տեղի են ունենում վարքագծային փոփոխություններ բացասական հետևանքներով, հատկապես կոնֆլիկտային ընտանիքներում, որտեղ ծնողները վիճում են, արտահայտելով բացասական զգացմունքներ, հաճախ՝ երեխաների ներկայությամբ: Ընտանիքի դերը շատ կարևոր է դեռահաս անձի ձևավորման և զարգացման համար, և այն դեռահասները, ովքեր մեծանում են դժվար ընտանիքներում, չեն դրսևորում և չեն կարող դրսևորել հասարակության մեջ ընդունված նորմերին համարժեք վարք: Վարքագծի դրսևորման առանձնահատկությունները առավել ուշագրավ են դառնում հատկապես տասնմեկից տասնհինգ տարեկան դեռահասների շրջանում, այս տարիքում բնորոշ են լուրջ որակական տեղաշարժերը և հոգեբանաֆիզիոլոգիական նորագոյացությունները: Կոնֆլիկտային ընտանիքներում մեծացող երեխաները աչքի են ընկնում առողջ փոխհարաբերություններ

ձևավորելու ցածր կարողությամբ և շփման մի շարք խանգարումներով, որը բխում է դեռահասի ընտանեկան կարգավիճակից: Դեռահասներն իրենց փոխհարաբերություններում անվստահ են, բարդությամբ լիված, քանի որ ստիպված են թաքցնել սեփական ընտանիքների իրական նկարագիրը, ամաչում են հասակակիցներից և մեծահասակներից, շատ հաճախ ստում են և թաքցնում իրական վիճակը (Մուրադյան 2010: 24-25):

Ծնողների վերաբերմունքը իրենց երեխաների նկատմամբ շատ տարբեր է: Ծնողների ժլատությունը երեխաների նկատմամբ շատ լուրջ սխալ է, դրա պատճառով երեխաները դառնում են անազնիվ, խորամանկ, կապվում են հիմար շրջապատի հետ: Հետևաբար ամենալավ արդյունքը ստացվում է, երբ ծնողները հոգ են տանում երեխաների մասին: Երեխան վաղ տարիքից ծնողների կողմից չի ընկալվում որպես անձ: Հաճախ մայրը կարող է մոռանալ երեխայի գոյության մասին և երկար ժամանակ թողնել նրան միայնակ: Անձնական շփումից զրկված և մեկուսացված երեխան ի վիճակի չէ զարգացնել սեփական հմտությունները: Ծնողների անտարբերությունն ու անհուսալիությունը բերում է երեխայի մոտ հիասթափություն և որպես հետևանք՝ ազրեսիա: Այս հիասթափությունն արտահայտում է բացասական վարք ցուցաբերելով:

Երեխայի վարքի վրա կարող է ազդել նաև ծնողների սխալ մոտեցումը: Շատ ծնողների թվում է, որ եթե երեխային նվերներ և այլ հաճելի առարկաներ խոստանան, ապա կարող են հասնել այն բանին, որ նրանք դպրոցում լավ սովորեն, երաժշտությամբ կամ սպորտով զբաղվեն, կարգապահ լինեն, լսեն իրենց և այլն: Մինչդեռ հաճախ հակառակ արդյունք են ստանում՝ նման նվերներն ու զիջումները չեն գնահատվում որպես ինքնուրույն արժեքներ, սովորելու ներքին դրդապատճառները թուլանում են և հետո նույնիսկ պարզվում են էլ չեն օգնում: Երեխան նորանոր նվերներ և ազատություններ է պահանջում:

Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես « մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ»:

Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ «կոնֆլիկտը անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է»(Sam 2023):

ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՎՐԱ

Ընտանեկան կոնֆլիկտը պայքար է ընտանիքի երկու կամ ավելի անդամների միջև, որոնք տարբեր տեսակետներ ունեն առաջացած խնդիրների լուծման նկատմամբ: Դրանք կարող են լինել կոնֆլիկտներ ամուսնու և կնոջ, քույրերի և եղբայրների միջև :

Կոնֆլիկտները կարող են առաջանալ հետևյալ պատճառով.

1. Իրավիճակային պատճառներ. ցանկացած իրավիճակ, որից դժգոհ են ընտանիքի անդամները, կարող է կոնֆլիկտ առաջացնել: Օրինակ`

1. Երբ ծնողը կամ ծնողները ավելի շատ սեր կամ ուշադրություն են ցուցաբերում երեխայի նկատմամբ և անտեսում մյուսներին:

2. Երբ ամուսինը ֆինանսապես չի ապահովում ընտանիքին:

3. Երբ երեխաները չեն հնազանդվում իրենց ծնողներին:

2. Անհատականության տարբերություններ. ոչ մի երկու անհատ նույնը չեն, նույնիսկ երկվորյակները: Անհատական տարբերությունն կապված է ժառանգականությունից և շրջակա միջավայրից: Որոշ մարդիկ կարող են լինել դանդաղաշարժ և լուռ, իսկ մյուսները` արագաշարժ, աղմկոտ: Այս տարբեր վարքագծային օրինաչափությունները կարող են կոնֆլիկտներ առաջացնել ընտանիքում:

3. Ուժային պայքար. կոնֆլիկտներ կարող են առաջանալ, երբ մարդիկ ընտանիքում պայքարում են իշխանության համար : Իշխանությունը մեկ այլ անձի վրա ազդելու ունակությունն է: Դա կարող է տեղի ունենալ ամուսնու և կնոջ միջև: Դա կարող է տեղի ունենալ նաև կրտսեր և ավագ եղբոր կամ քրոջ միջև (Ozuruonye 2023):

Կոնֆլիկտը կարող է տեղի ունենալ, երբ ընտանիքի անդամները տարբեր տեսակետներ կամ համոզմունքներ ունեն, որոնք բախվում են: Երբեմն կոնֆլիկտ կարող է առաջանալ, երբ մարդիկ սխալ են հասկանում միմյանց և սխալ եզրահանգման են գալիս: Հակամարտության խնդիրները, որոնք խաղաղ ճանապարհով չեն լուծվում, կարող են հանգեցնել վեճերի:

Երբեմն կոնֆլիկտը դառնում է մշտական և շարունակվող հակամարտությունը կարող է սթրեսային լինել և վնաս հասցնել ընտանիքի անդամների հարաբերություններին: Որոշ

մարդիկ դժվարանում են կառավարել իրենց զգացմունքները և վիրավորական խոսքեր են ասում ցուցաբերելով ագրեսիվ պահվածք, կատարում բռնություն: Դրական շփումը կարող է նվազեցնել կոնֆլիկտը, որպեսզի ընտանիքի անդամները կարողանան հասնել խաղաղ լուծման: Սա նշանակում է, որ բոլորը համաձայն են փոխզիջման: Երբեմն ուժեղ հույզերը կամ ուժային անհավասարակշռությունը, որոնք կարող են առկա լինել հարաբերություններում, բարդացնում է կոնֆլիկտի լուծումը:

Ընտանեկան կոնֆլիկտի տարածված պատճառները, որի միջով անցնում է ընտանիքը ունի մի քանի փուլեր:

Դրանք են՝

- Սովորում են ապրել որպես նոր զույգ
- Երեխայի ծնունդ
- Այլ երեխաների ծնունդ
- Դպրոց գնացող երեխա
- Երեխան դառնում է պատանի
- Երեխան դառնում է չափահաս :

Այս փուլերից յուրաքանչյուրը կարող է առաջացնել նոր սթրեսներ, որի հետևանքով կատեղծվի կոնֆլիկտներ: Ընտանեկան իրավիճակի փոփոխությունները կարող են ազդել ընտանիքի փոխհարաբերությունների վրա և նպաստել կոնֆլիկտների առաջացմանը:

Կարող են լինել այնպիսի իրադարձություններ, ինչպիսիք են՝

- բաժանում կամ ամուսնալուծություն
- տեղափոխվել նոր տուն կամ երկիր
- աշխատանքի փոփոխություն
- արտագնա աշխատանք
- ֆինանսական հանգամանքների փոփոխություն:

Յուրաքանչյուր ծնողի կարծիքները, արժեքները և կարիքները նույնպես կարող են փոխվել, և նրանք կարող են գտնել, որ դրանք համատեղելի չեն (Family conflict 2014):

Ընտանիքի անդամները պետք է աջակցեն, գնահատեն միմյանց, որը հնարավորություն կտա հաղթահարել բազմաթիվ խնդիրներ: Կոնֆլիկտները բնական և անխուսափելի երևույթներ

են, որոնք մնում են չլուծված կամ սրվում են և դրանք կարող են դառնալ սթրեսի և խնդիրների առաջացման էական պատճառ:

Ընտանեկան կոնֆլիկտները կարող են հատկապես տագնապալի լինել, քանի որ դրանք շատ անձնական են:

Կոնֆլիկտների առաջացման հիմնական պատճառները հաճախ ֆինանսներն են, երեխաների դաստիարակությունը և կարգապահությունը, անչափահասների ներգրավվածությունը, եղբայրների և քույրերի միջև մրցակցությունը:

Ընտանիքում կոնֆլիկտ առաջացնող ամենատարածված գործոններից մեկը բաց հաղորդակցության բացակայությունն է: Առանց արդյունավետ հաղորդակցման՝ ընտանիքի անդամների համար դժվար է լինում համոզվել, որ իրենց կարիքները բավարարված են, և իրենք հարգված են:

Շփման պակասը կարող է նաև ստիպել մարդուն զգալ, որ իր կարիքները և ցանկությունները կատարված չեն: Արդյունքում, ընտանիքի անդամների նախկին խնդիրներին ավելանում են նորերը:

Ընտանեկան կոնֆլիկտները հաճախ բխում են նաև պարտականություններից: Կոնֆլիկտներ կարող են առաջանալ այն բանից, թե ինչպես են ընտանիքի անդամները բաժանում տնային գործերը և կատարում այլ պարտականություններ:

Ֆինանսական հարցերի հետ կապված տարաձայնությունները կարող են խիստ կործանարար ազդեցություն ունենալ ընտանիքի անդամների բոլոր տեսակի հարաբերությունների վրա: Ամուսինները, քույրերն ու եղբայրները հաճախ վիճում են փողի կառավարման շուրջ: Եվ իրավիճակը կարող է էլ ավելի բարդանալ, եթե ընտանիքում ժառանգական խնդիրներ լինեն:

Արժեքների տարբերությունը ծնողների ու նրանց երեխաների միջև կոնֆլիկտի շատ տարածված պատճառ է: Մարդիկ կարող են տարբեր կարծիքներ ունենալ քաղաքականության, բարոյականության, մշակույթի և այլնի վերաբերյալ: Հաճախ դա ավելի մեծ վտանգ է է առաջացնում, քանի որ երեխաները անցնում են տարբեր զարգացման փուլեր, որտեղ կարևոր է նրանց անկախության և ինքնության ամրապնդումը:

Արդյունքում, ընտանիքի անդամները կարող են կորցնել միասնության զգացումը, և ընտանիքի ամբողջ առաջընթացը կարող է կատարվել բացասական ուղղությամբ:

Երբ երկու ընտանիք սկսում են միասին ապրել, նրանք մտնում են վտանգավոր տարածք, քանի որ որքան շատ մարդ է ներգրավված, այնքան ավելի հավանական է, որ ամեն ինչ սխալ ընթանա: Նույնիսկ այն մարդիկ, ովքեր տարիներ շարունակ կիսում են նույն տանիքը, կարող են լուրջ կոնֆլիկտներ ունենալ, որովհետև յուրաքանչյուրն ունի իր յուրահատուկ կարիքները, տեսակետները և սովորությունները:

Սա կարող է բացասաբար ազդել երեխաների վրա, որտեղ կան տարբեր ակնկալիքներ և *կանոններ*:

«Հաճախ չբացահայտված կանոններ, նորմեր և համոզմունքներ կան ընտանիքում յուրաքանչյուրի դերի և յուրաքանչյուր դերի հետ կապված սպասելիքների վերաբերյալ,- բացատրում է Թիֆանի Լովինսը: Երբ անհատի այս ակնկալիքներն ու կարիքները բացահայտ չեն հաղորդվում և համընկնում են, դա կարող է հանգեցնել նրան, որ յուրաքանչյուր անդամ արձագանքի ենթադրություններին և հույզերին՝ այդպիսով ստեղծելով կոնֆլիկտների առաջացման հիմք »:

*Խորհրդատու*ն ավելացնում է. «Երբ դա գործի դրվի, յուրաքանչյուր անհատ ձգտում է դիմել իր լռելյայն հաղորդակցման ոճին, որն էլ ավելի է օտարացնում յուրաքանչյուրին մյուսից: Ումանք կարող են պասիվանալ և անջատվել: Մյուսները կարող են հարձակվել կամ ագրեսիվ արձագանքել »:

«Բացահայտելով և բացահայտորեն նշելով, որ փոխադարձ նպատակը միշտ յուրաքանչյուր անհատի համար առողջության և երջանկության տարածք ստեղծելն է, և ընտանիքը կարող է հիանալի ելակետ հանդիսանալ դժվար զրույցների համար », - *մեկնաբանում է Թիֆանին* :

Կարևոր չէ, թե ինչն է առաջացրել որոշակի վիճաբանություն, կարևոր է իմանալ, թե ինչպես կանխել հետագա ագրեսիան և նվազագույնի հասցնել ապագայում նման կոնֆլիկտների հավանականությունը :

Կոնֆլիկտներ կարող են առաջանալ ամուսինների միջև նրանց որոշակի պահանջմունքների անբավարվածության հետևանքով: Այս տեսակետը պնդում են շատ հոգեբաններ: Ըստ ամերիկացի հոգեբան Ու. Ֆ. Հարլիի այդ պահանջմունքների բավարարումն ապահովում է

ամուսնության կայունությունը, իսկ անբավարարվածությունը հանգեցնում է կոնֆլիկտի՝ ընդհուպ ամուսնալուծության: Հարլին առանձնացնում է տղամարդկանց և կանանց հնգական հիմնական պահանջմունքներ:

Տղամարդկանց հինգ հիմնական պահանջմունքներն ամուսնության ոլորտում.

1. սեռական բավարարվածություն, 2. հանգստի ուղեկից, 3. հմայիչ կին, 4. տնային տնտեսության վարում, 5. հիացմունք:

Կանանց հինգ հիմնական պահանջմունքներն ամուսնության ոլորտում.

1. քնքշություն, 2. խոսելու, զրուցելու հնարավորություն, 3. ազնվություն և անկեղծություն, 4. ֆինանսական աջակցություն, 5. ընտանիքին նվիրվածություն:

Ընտանեկան հոգեբանները կարող են առաջարկել կենսական նշանակություն ունեցող միջամտություններ՝ հաղորդակցությունը բարելավելու, վեճերը կարգավորելու և ընտանիքներին ճգնաժամերի, անցումների և հոգեկան առողջության հետ կապված խնդիրների լուծման հարցում օգնելու համար: Նրանք նշանակալի ներդրում են ունենում հոգեկան առողջության և բարեկեցության խթանման գործում:

Կա ընտանեկան կոնֆլիկտները հաղթահարելու և հաղորդակցման հմտությունները բարելավելու կարևոր խորհուրդներ:

1. Ընդունել այն, որ անհնար է վերահսկել ուրիշների վարքը:

Եթե արդյունքները չեն համապատասխանում ակնկալիքներին, հարկավոր է փոխել մոտեցման եղանակը, հարգալից վերաբերվել նրանց, լինել համբերատար, որը ավելի դրական ազդեցություն կունենա:

2. Թույլ տվեք, որ ցանկացած գայրույթ թուլանա:

Ավելի լավ է թույլ տալ, որ կոնֆլիկտը լուծելուց առաջ իրավիճակը հանդարտվի, որպեսզի մտածված և կառուցողական զրույց լինի: Երբ զգացմունքայնությունը բարձր է, դա դժվարացնում է արդյունավետ լուծումներ և քննարկումներ ունենալ: Փորձել խոսել հանգիստ տոնով և մի կողմ դնել հույզերը:

Փորձել լուծել կոնֆլիկտը, քանի դեռ մարդիկ գայրացած են, նման փորձերը կարող են ձախողվել կամ նույնիսկ ավելի վատթարացնել իրավիճակը: Այստեղ նպատակը ոչ թե վիճաբանություն շահելն է, այլ առողջ և փոխշահավետ լուծում գտնելը:

3. Փորձել հասկանալ ընտանիքի անդամների տեսակետները:

Կարևոր է ընտանիքի մյուս անդամներին հնարավորություն տալ արտահայտելու իրենց տեսակետներն առանց ընդհատելու: Փորձել հասկանալ նրանց և այնուհետև բացահայտել, թե ինչ կարելի է անել, կոնֆլիկտը լուծելու համար: Ուրիշներին լսելը և կարեկցելը արդար լինելու և արժեքավոր գաղափարներ ձեռք բերելու միջոց է:

4. Հասկանալ, թե ինչպես է կոնֆլիկտը ազդում ամբողջ ընտանիքի վրա:

Հեշտ է կոնֆլիկտի մեջ ընկնել՝ առանց գիտակցելու, թե դա որքանով է ազդում շրջապատող մարդկանց վրա: Օրինակ, երբ ծնողները վիճում են, երեխաները հաճախ կարող են զգալ իրենց սթրեսը և տրամադրության փոփոխությունները, նույնիսկ եթե փորձում են թաքցնել դրանք:

Այնուամենայնիվ, երբ կոնֆլիկտի մեջ գտնվող ընտանիքի անդամները հասկանում են, թե ինչպես է դա վնասում ընտանիքի մնացած անդամներին, նրանք ավելի հավանական է, որ բաց լինեն լուծում գտնելու համար (Skurat 2023):

Կոնֆլիկտը հոգեկան և սոցիալական ուժերի հակասությունների սրման բարձր աստիճան է: Կոնֆլիկտները լինում են ներքին և արտաքին: Ներքին կոնֆլիկտի դեպքում բխվում են նույն անձի հոգեկանում առկա երկու կամ ավելի ուժեր, հակումներ, դրդապատճառներ կամ դիրքորոշումներ: Օրինակ՝ մարդ միաժամանակ կարող է ունենալ երկու անհամատեղելի ցանկություն, որոնցից մեկը կատարելու դեպքում մյուսից պետք է հրաժարվի: Արտաքին անվանում են այն կոնֆլիկտները, որոնք առաջանում են մարդու և այլ սոցիալական օբյեկտների՝ առանձին անձանց, խմբերի կամ հասարակության միջև: Կոնֆլիկտների սոցիալական հոգեբանությունը շատ մեծ ու հետաքրքրական բնագավառ է և առանձին քննարկում է պահանջում: Գոյություն ունի երևույթների մի հատուկ դաս, որն ստացել է դերային կոնֆլիկտների անունը: Որևէ դերի կատարման ընթացքում այն փոխներգործում է տվյալ խմբի մյուս անդամների լրացնող դերերի հետ: Դրանց պահանջներն անձը պետք է հաշվի առնի իր դերը հաջողությամբ կատարելու համար: Բայց եթե դերային սպասումների միջև հակասություններ են առաջանում, ապա դերակատարը հայտնվում է կոնֆլիկտային վիճակում: Դերային կոնֆլիկտները էական նշանակություն ունեն միջանձնային փոխհարաբերություններում: Դրանց լուծումն իրագործվում է հարմարվողական

մեխանիզմների և գործընթացների օգնությամբ, որոնց հետևանքով փոփոխություններ են առաջանում ինչպես անձի, այնպես էլ հասարակության մեջ: Մինչև վերջերս հոգեբանական գրականության մեջ նկարագրվել է դերային կոնֆլիկտների երեք հիմնական տեսակ՝ միջդերային, ներդերային և անձի ու նրա ստանձնած դերի միջև առաջ եկող բախումներ: Միջդերային կոնֆլիկտներ առաջանում են այն դեպքում, երբ նույն անձից պահանջում են միաժամանակ կատարել երկու դեր, որոնց ներկայացրած սպասումները անհամատեղելի են կամ բավարար չափով փոխհամաձայնեցված չեն: Օրինակ՝ նույն անձը միաժամանակ ընտանիքի և ընկերախմբի անդամ է, և երկուսն էլ նրա համար էտալոնային խմբեր են: Եթե ծնողների և ընկերների պահանջներն ու սպասումները տարբեր են, ապա նա կհայտնվի կոնֆլիկտային վիճակում: Միջդերային կոնֆլիկտի վիճակները հասարակության մեջ քիչ չեն: Օրինակ՝ այդպիսի վիճակ է ապրում այն ուսուցիչը, որի դասարանում նստած է նաև իր հարազատ զավակը: Երեխան այս դեպքում ուսուցչի համար հանդես է գալիս որպես զավակ և աշակերտ (երկու դերով), մյուս կողմից հայրը նույնպես սոցիալական այդ նույն բեմի վրա ստիպված է երկու՝ հոր և ուսուցչի դերեր կատարել: Իսկ այդ դերերը, հատկապես նույն բեմի վրա կատարելիս, մեծ չափով անհամատեղելի են: Այսպիսով՝ միջդերային կոնֆլիկտ ծագում է այն դեպքում, երբ նույն անձը միաժամանակ երկու դեր է կատարում և այդ դերերը վարքի նկատմամբ տարբեր պահանջներ են ներկայացնում: Միջդերային կոնֆլիկտներ ծագում են ոչ միայն դերային սպասումների տարբերություններից, այլև այն պատճառով, որ տարբեր դերեր կատարվում են սոցիալական տարբեր բեմերի վրա, որդու դերը՝ ընտանիքում, աշակերտի դերը դպրոցում և այլն (Նալչաջյան 2004: 168): Նորմալ դերակատարման դեպքում յուրաքանչյուր դեր ակտիվացվում ու իրագործվում է միայն այն ժամանակ, երբ անձը հայտնվում է համապատասխան իրադրության մեջ: Դրանք նույն բեմի վրա առանց կոնֆլիկտների դրսևորվել չեն կարող, քանի որ իրենց կառուցվածքով անհամատեղելի են: Եթե անհամատեղելի դերերը հանգամանքների բերումով, այնուամենայնիվ, նույն սոցիալական բեմի վրա են կատարվում, ապա երկուսի իրագործման ընթացքում էլ խանգարումներ են առաջանում: Միջդերային կոնֆլիկտների լուծման նպատակով դրանց կատարումը պետք է մեկուսացնել իրարից ըստ տարածության ու ժամանակի: Այդպիսին է հիմնական հարմարվողական ստրատեգիան, որ ինքնաբերաբար ընտրում են նման

վիճակում հայտնված մարդիկ: Ելնելով նման փաստերից՝ կարելի է ասել, որ միջդերային որոշ կոնֆլիտներ ծագում են մարդկանց կոնֆորմիստական վարքագծի հետևանքով: Թեև կոնֆորմիստական վարքագիծն ու զիջումներն ունենում են իրենց դրդապատճառները, այնուամենայնիվ, դրանք հանգեցնում են նոր կոնֆլիկտների, այնպես որ, սոցիալական հարմարվողականության նման (կոնֆորմիստական) ռազմավարությունը միշտ չէ, որ իրեն արդարացնում է: Օրինակ, երբ մարդուց պահանջվում է զուգահեռաբար երկու դեր կատարել, բայց նրա ժամանակն ու եռանդը չեն հերիքում, ապա դա առաջացնում է կոնֆլիկտ: Երբեմն երկու դերեր կարող են պարունակել անհամատեղելի նորմեր, արժեքներ և սպասումներ, որոնք հանգեցնում են ներքին կոնֆլիկտի: Այսպիսի դեպքերում երկու դերերի կատարումներն էլ կազմալուծվում են: Այդպիսին է, օրինակ, մեկից ավելի ընտանիքներ ունենալը (երկու կամ ավելի ընտանիքներում հայր լինելը), որը մեզանում արգելվում է նույնիսկ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով: Ավանդական (սովորութային) կարգավորումը փոխարինվում է իրավական կարգավորմամբ: Ավանդական բարոյական և իրավական նորմերը գոյակցում են որպես նույն դերերին վերաբերող բացասական սանկցիաներ: Երկու դերերի կոնֆլիկտի ուժն ու տևականությունը պայմանավորված են նրանով, թե դրանց կազմում ինչ թիվ են կազմում համընկնող (համատեղելի) և անհամատեղելի, իրար բացառող սպասումները: Եթե համատեղելի սպասումների թիվը մեծ է, կոնֆլիկտը թույլ է լինում, հակառակ դեպքում՝ լարված ու խոր: Մա միաժամանակ և՛ դերային, և՛ բարոյական կոնֆլիկտ է, որի լուծումը անձի ամենախոր արժեքների և բնավորության գծերի իմացության համար շատ արժեքավոր նյութ կարող է տալ: Նման սթրեսային իրադրություններում մարդիկ սկսում են գիտակցել այնպիսի նորմերի և դերային սպասումների անհամատեղելի լինելու փաստը, որի մասին մինչ այդ չէին էլ կարող կռահել: Դերային կոնֆլիկտները նաև նորմերի կոնֆլիկտներ են (Նալչաջյան 2004: 166-169):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով՝ կատարված հետազոտական աշխատանքը պետք է նշել, որ ավելի է կարևորվում ընտանիքի հոգևոր հիմքի վերականգնումը: Ծնողների և երեխաների միջև անտարբերությունը և հոգևոր անջրպետը հաղթահարելու համար հարկավոր է այնպես անել, որ ընտանիքի անդամների փոխհարաբերությունները անկեղծ և խորը բնույթ կրեն, որը հնարավորություն կտա ընտանիքում ստեղծել սիրո, ջերմության մթնոլորտ, որը կապահովի ընտանիքի համերաշխությունը, իր դրական ազդեցությունը կունենա երեխաների վրա: Երեխաները կազատվեն սթրեսային վիճակներից և կբարձրանա նրանց ինքնագնահատականը, վճռորոշ ազդեցություն կունենա երեխաների ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա:

Ընտանիքում պետք է.

- Նվազեցնել կոնֆլիկտները և արագ լուծել կոնֆլիկտի պատճառները
- Ստեղծել նպաստավոր պայմաններ երեխաների ֆիզիկական և հոգեկան առողջ զարգացման համար
- Հաստատել ընտանիքի անդամների և երեխաների միջև այնպիսի հարաբերություններ, որը հիմնված լինի փոխադարձ սիրո և հարգանքի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մուրադյան Ա., Հոգեբանությունը և կյանքը «Զանգակ-97» հրատարակչություն, հանդես 1-2, 2010:
2. Նալչաջյան Ա., Սոցիալական հոգեբանություն, Երևան, 2004:
3. Barnard A. J. 2023, The Editors of Encyclopædia Britannica, <https://www.britannica.com/topic/family-kinship>
4. N., Sam M.S. 2023, Family psychology, <https://psychologydictionary.org/family-psychology/>
5. Sujan 2021, What Is Family? Definition, Features, Types, and Functions, https://tyonote.com/family/#Types_of_Family
6. Ozuruonye 2023, Family Conflicts and Crisis, <https://www.acadlly.com/family-conflicts-and-crisis/>
7. Family conflict 2014, <https://www.betterhealth.vic.gov.au/health/healthyliving/family-conflict>
8. Skurat K. 2023, How to Manage and Resolve Family Conflicts, <https://calmerry.com/blog/family/how-to-manage-and-resolve-family-conflicts/>